ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ANNUAL REPORT

AraratBank

2021

ՓԱՍՏԵՐ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

- Ընդհանուր ակտիվները մեկ տարվա ընթացքում աճել են 7.7%-ով և կազմել 268,065 մլն ՀՀ դրամ, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 11.84%:
- Ընդհանուր պարտավորությունները 2020թ.-ի համեմատ աճել են 9.3%-ով և կազմել 230,286 մլն ՀՀ դրամ, իսկ 2011թ.-ից սկսած միջին աճի տեմպը կազմել է 11.82%:
- Հաճախորդներին տրված վարկերը հաշվետու տարում նվազել են 0.3%-ով և կազմել 147,787 մլն ՀՀ դրամ, իսկ միջին աճի տեմպը վերջին տասը տարիների համար կազմել է 14.4%:
- Արժեթղթերում ներդրումները աճել են 12.7%-ով և կազմել 46,833 մլն ՀՀ դրամ: 2011թ.-ից սկսած միջին աճի տեմպը կազմել է 17.7%:
- Բանկի կողմից ներգրավված ժամկետային ավանդները աճել են 46.0%-ով և կազմել 71,420 մլն ՀՀ դրամ, իսկ 2011թ.-ից սկսած միջին աճի տեմպը կազմել է 13.4%: Միայն ֆիզիկական անձանց միջոցները մեկ տարում աճել են 41.0%-ով, իսկ իրավաբանական անձանց միջոցները՝ 76.3%-ով:
- Բանկի զուտ տոկոսային մարժան 2020թ.-ի համեմատ նվազել է 0.28 տոկոսային կետով և կազմել է 4.03%:
- Բանկի զուտ շահույթը կազմել է 45.7 մլն ՀՀ դրամ:
- Բանկի ընդհանուր կապիտալի վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 11.9%:
- Բանկը շարունակում է իր վերաբրենդավորման գործընթացը:
- 2021 թ.-ի վերջին Բանկն ունեցել է թվով 53 մասնաճյուղ:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ

2021 թվականը դժվարություններով լի ևս մեկ տարի էր մեր երկրի, նրա տնտեսության և ֆինանսական հատվածի համար: Տարվա ընթացքում բանկերը կանգնած էին լուրջ մարտահրավերների առջև՝ մակրոտնտեսական թույլ իրավիճակի, գնաճի տեմպերի բարձրացման, ներքաղաքական և աշխարհաքաղաքական անկայունության, խիստ կարգավորման և կոշտ մրցակցության պայմաններում: Ի հեճուկս բարդ միջավայրի, ԱրարատԲանկը 2021 թվականին հավատարիմ մնաց իր առաքելությանն ու տեսլականին և, համակերպվելով փոփոխական պայմաններին, ջանքեր գործադրեց օգտվելու երևան եկած նոր հնարավորություններից:

Անցած տարվա ընթացքում, մեզ հիմնականում հաջողվեց իրականացնել այն ռազմավարությունը, որը մշակել էինք դեռևս 2020 թվականի վերջին՝ հետպատերազմյա անորոշության պայմաններում: Բանկը ցուցաբերեց բարձր դիմադրողականություն և, կարող եմ վստահաբար ասել, արդարացրեց իր հաճախորդների սպասելիքները, ինչպես նաև կատարեց իր պարտականությունները հանրության նկատմամբ՝ զգալի դերակատարություն ունենալով տնտեսության վարկավորման գործում:

Ընդհանուր առմամբ, 2021 թ. մեզ համար ներուժի պահպանման և գործընկերության ամրապնդման, թվային տեխնոլոգիաների ներդրման տարի էր: Բանկը հանձն է առել իր կորպորատիվ մշակույթի բարելավումը՝ կառավարման մեխանիզմների արդիականացման և կառուցվածքային բարեփոխումների միջոցով:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ

Անցած տարի մենք վերահաստատեցինք և ամրապնդեցինք Հայաստանի ամենաեվրոպական բանկերից մեկի համբավը՝ էլ ավելի սերտ գործակցելով մեր հին ու նոր միջազգային ֆինանսական հաստատությունների և մեր թղթակցային բանկերի հետ: Միևնույն ժամանակ մենք շարունակեցինք կառուցել և ամրապնդել Եվրասիական տարածաշրջանի բանկերի և ֆինանսական հաստատությունների հետ մեր բազմամյա գործընկերությունը:

Գոհունակությամբ եմ նշում նաև, որ ՀՀ-ում առկա կադրերի ահագնացող պակասի և հոսունության պայմաններում, պահպանել և ընդլայնել ենք Բանկի կարևորագույն ակտիվը՝ մասնագիտական կորիզը, և ծրագրեր մշակել աշխատակիցների զարգազման և խրախուսման ուղղությամբ:

Թեև Բանկի վարկային պորտֆելը անցած տարվա ընթացքում գրեթե չաճեց, այն շարունակեց ներգրավել հազարավոր նոր վարկառուների, ի դեմս ՓՄՁ-ների, ֆերմերների, կանաչ տեխնոլոգիաներ ներդրողների, երիտասարդ ու կին գործարարների, օտարությունից Հայրենիք վերադարձող արտագնա աշխատողների, հիփոթեքային վարկավորմամբ տուն ձեռքբերող երիտասարդ ընտանիքների և այլն: Կարճատև բացակայությունից հետո, ԱրարատԲանկը վերադարձավ պետական արժեթղթերի շուկա և մտադիր է նորից առաջատար դառնալ այս ոլորտում: Հաջողություն եմ համարում նաև մեր ներդրումային բանկի գործունեությունը, որը կարճ ժամանակահատվածում առաջատար դարձավ համակարգում:

Բաժնետերերի, Բանկի Խորհրդի և անձամբ իմ անունից խորին շնորհակալություն եմ ցանկանում հայտնել մեր հաճախորդներին՝ հին ու նոր, որոնք իրենց խնայողությունները, բիզնեսի ապագան և իրենց ընտանիքների բարեկեցությունը վստահել են մեզ: Նրանց թիվն այս տարի հատեց 260,000 շեմը, չհաշված այն տասնյակ հազարավոր մարդկանց, որոնք մեզ են դիմում միանգամյա ֆինանսական գործարքների համար: Հավաստիացնում եմ, որ մենք ամենայն պատասխանատվությամբ ենք կրում մեր հայրենակիցներին ծառայելու բարձր պատիվը: Գիտակցում ենք նաև, որ մեր սպասարկման որակի և ծառայությունների մատուցման, դրանց բազմազանության, արագության, մատչելիության, հասանելիության առումներով դեռ անելիքներ ունենք: Այս խնդիրների արագ և արդյունավետ լուծումը Բանկի համար առաջնային է մնում՝ մարդակենտրոն հաստատություն դառնալու և հաճախորդի կարիքները ավելի լավ բավարարելու մեր ռազմավարության շրջանակում:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ

AraratBank

Հարգելի՛ բաժնետերեր, հաճախորդներ և գործընկերներ,

2021թ.-ը ևս մարտահրավերներով լի տարի էր. ՔՈՎԻԴ-19 համաճարակի և արցախյան պատերազմի հետևանքներ, ներքաղաքական իրավիճակով պայմանավորված ճգնաժամ: Ըստ էության ԱրարատԲանկը և ՀՀ բանկային համակարգը շարունակել են գործել ճգնաժամային իրավիճակում՝ այս անգամ ավելի կոփված և ավելի մեծ փորձառությամբ: Վերջին երկու տարիների ընթացքում իրար հաջորդող ճգնաժամերին և նոր մարտահրավերներին դիմակայումը բավականին սահուն էր՝ շնորհիվ Ճգնաժամի կառավարման և արտակարգ իրավիճակներում բիզնեսի անընդհատության ապահովման քաղաքականության:

2021թ.-ին ԱրարատԲանկի ամենակարևոր ձեռքբերումներից էին ՓՄՁ և Ագրո վարկերի զգալի աճը ընդհանուր պորտֆելում՝ համապատասխանաբար 37.4%-ով և 54.5%-ով, տարեվերջին 2,5 մլրդ ՀՀ դրամի չափով «NASIRA» վարկային պորտֆելի ձևավորումն ու ավանդային պորտֆելի աճը՝ 46.0%-ով:

Չնայած հաշվետու տարում միջազգային ֆինանսական հաստատություններից միջոցների ներգրավման ընթացքում առաջացած խոչընդոտների և խստացված պահանջների՝ Բանկն ակտիվորեն շարունակել է համագործակցությունը միջազգային ֆինանսական հաստատությունների հետ՝ կնքելով շուրջ 55,000,000 ԱՄՆ դոլարի վարկային պայմանագրեր:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ

Հաշվետու տարին նշանավորվել է նաև ներդրումային և թվային բանկինգի ոլորտներում արձանագրված ձեռքբերումներով. գործարկվել է ARARATBANK Trading Platform առևտրային հարթակը, որն եզակի է համարվում ՀՀ բանկային համակարգում, ներառում է միջազգային շուկայի ավելի քան 5000 ֆինանսական գործիք և հնարավորություն է տալիս ներդրողներին ինքնուրույն մուտք գործել միջազգային ֆինանսական շուկաներ: Խոսելով թվային տիրույթի մասին՝ կարևոր եմ համարում նշել, որ 2021թ.-ի աշնանը գործարկվել է ԱրարատԲանկի տեխնոլոգիապես հագեցած միանգամայն նոր AraratMobile հավելվածի ամբողջական տարբերակը, ինչպես նաև ներդրվել է ֆիզիկական անձանց միջև փոխանցումների նոր, արագ և անվտանգ ծառայություն՝ FLIGHT ծառայությունը:

Մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում ևս արձանարգրվել են մի շարք դրական փոփոխություններ: Կարևորելով յուրաքանչյուր աշխատակցի առողջությունը՝ ներդրվել է առողջապահական ապահովագրության համակարգը, իրականացվել է մասնաճյուղերի սպասարկող անձնակազմի մասնագիտական ունակությունների ստուգում և գնահատում, Բանկի 30-ամյակի առթիվ կազմակերպված թիմակառուցողական միջոցառման արդյունքում վերհանվել են տաղանդներ և բացահայտվել թիմային աշխատանքի թույլ և ուժեղ կողմերը, ինչպես նաև ակտիվացել է ԲՈՒՀ-երի հետ համագործակցությունը:

Ինչ վերաբերում է դեռ 2020թ.-ի սեպտեմբերին մեկնարկած վերաբրենդավորման գործընթացին՝ հատկանշական է, որ 2021թ.-ի վերջի դրությամբ վերաբրենդավորվել է 23 մասնաճյուղ՝ այսպիսով վերաբրենդավորված մասնաճյուղերի թիվը հասցնելով 30-ի: Վերաբրենդավորման գործընթացին զուգահեռ աշխատանքներ են տարվել հաճախորդների սպասարկման որակն ու հարմարավետությունը բարելավելու ուղղությամբ: Արդյունքում մասնաճյուղերը համալրվել են CRM մասնագետներով, իսկ 2021թ.-ի ավարտին Բանկի վճարային տերմինալների թիվը կազմել է 47:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ

Հավելեմ, որ վերաբրենդավորումը ինքնանպատակ չէր և լոկ գույների ու տարբերանշանի փոփոխություն չէր ենթադրում: Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերը վերաբրենդավորման ներքո որդեգրած նոր մշակույթ է: Եվ այսպես, կարևոր եմ համարում ընդգծել, որ 2021թ.-ին մեր ուշադրության կենտրոնում են եղել նաև Բանկի կողմից իրականացվող կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերը: Իհարկե, բոլոր ծրագրերն էլ առանձնահատուկ են և բանկի բովանդակությանը համապատասխան, սակայն կառանձնացնեմ հատկապես երեքը՝ կրթական մեծ նշանակություն ունեցող «Ոտքի կանգնելու կամքը» փաստավավերագրական ֆիլմը, «Սիրիահայ ընտանիքների սոցիալ-տնտեսական ինտեգրումը Երևանում» ծրագիրը և Արմաթ տեխնոճամբարը:

Հատկանշական է, որ անցած տարի բարձր գնահատականների ենք արժանացել տարբեր միջազգային հեղինակավոր ֆինանսական կառույցների, գործընկերների կողմից: Ria Money Transfer համակարգի կողմից կրկին արժանացել ենք «Տարվա գործընկեր» մրցանակին, ավստրիական Raiffeisen Bank International AG-ի «Որակի գերազանցություն» (STP Quality Award) մրցանակին, «Global Finance» միջազգային հեղինակավոր ամսագրի կողմից Հայաստանի «Լավագույն ենթապահառու բանկ» անվանակարգին: Հայաստանի ֆոնդային բորսայի և Կենտրոնական դեպոզիտարիայի ամենամյա տվյալների ամփոփման արդյունքում ԱրարատԲանկը հաղթող է ճանաչվել միաժամանակ երեք անվանակարգերում՝ «Կորպորատիվ արժեթղթերի շուկայում բորսայի լավագույն անդամ 2021», «Կորպորատիվ արժեթղթերի շուկայում լավագույն շուկա ստեղծող 2021» և «Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամ 2021»:

Հարգելի՛ գործընկերներ, ամփոփելով՝ կարող եմ վստահեցնել, որ այսօր բանկում ձևավորված թիմը ներդնում է իր ողջ եռանդը և մասնագիտական ներուժը, որպեսզի արդարացնի բաժնետերերի, հաճախորդների սպասումները՝ կապված բանկի առաջընթացի և զարգացման հետ:

2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՎԵԼ ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

AraratBank

- **04.2021թ.** ԱրարատԲանկը 3 մլն եվրո է ներգրավել Incofin Investment Management ֆինանսական հաստատության կողմից երաշխավորված երկու հիմնադրամներից՝ 1,5 միլիոն եվրո Volksvermogen NV-ից և 1,5 միլիոն եվրո Incofin CVSO-ից՝ ապահովելով փոքր վարկերի հասանելիությունը միկրո ձեռնարկատերերի համար:

- **05.2021թ.** ԱրարատԲանկն ու FMO հոլանդական զարգացման բանկը, կարևորելով ֆինանսավորման հասանելիությունը, 25 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանգիր են կնքել:

- **06.2021թ.** «Սիմբիոտիքս» ներդրումային ընկերության նախաձեռնությամբ կայունության պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված 14.5 մլն. ԱՄՆ դոլարի միջոցներն ուղղվել են ԱրարատԲանկին:

- **10.2021թ.** ԱրարատԲանկը «Global Finance» միջազգային հեղինակավոր ամսագրի մասնագիտական թիմի կողմից ճանաչվել է Հայաստանի «Լավագույն ենթապահառու բանկ»:

- **10.2021թ.** Հոկտեմբերի 2-ին ԱրարատԲանկը նշել է իր գործունեության 30-ամյակն ու վերաբրենդավորման 1-ամյակը՝ նախապատվություն տալով թիմակառուցողական ձևաչափին:

- **12.2021թ.** AMX ֆոնդային բորսայի կողմից անցկացված «AMX մրցանակաբաշխություն 2021»-ին ԱրարատԲանկը լավագույնն է ճանաչվել միանգամից երեք անվանակարգում՝ «Կորպորատիվ արժեթղթերի շուկայում բորսայի լավագույն անդամ 2021», «Կորպորատիվ արժեթղթերի շուկայում լավագույն շուկա ստեղծող 2021» և «Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամ 2021»:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ | ԱԿՏԻՎՆԵՐ

2020թ. տեղի ունեցած ցնցումները 2021թ.-ին ևս իրենց անխուսափելի ազդեցությունն ունեցան ֆինանսական համակարգի վրա: Անորոշությունների զգալի աճի պարագայում թե՛ տնտեսությունը, թե՛ ֆինանսական համակարգը կրճատեցին իրենց ռիսկի ախորժակը, ինչը ուղղակիորեն անդրադարձավ բանկային համակարգի վարկային ներդրումների վրա՝ նվազման ուղղությամբ, տոկոսադրույքների վրա՝ աճի ուղղությամբ: 2021թ.-ին բանկային համակարգը ռիսկերի կլանման տեսանկյունից շարունակում է մնալ հուսալի դիրքերում. կապիտալի համարժեքության, իրացվելիության նորմատիվները գտնվում են սահմանված նվազագույն շեմերից բարձր մակարդակում:
ԱրարատԲանկը ևս հաջողեց հաշվետու տարում՝ ապահովելով բյուջետային ցուցանիշների կատարումը:

2021թ.-ի տարեկան արդյունքներով Բանկի ակտիվները կազմել են 268,065 մլն ՀՀ դրամ: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշն աճել է 7.7%-ով կամ 19.2 մլն ՀՀ դրամով: Բանկի ակտիվների վերջին տասը տարիների միջին աճի տեմպը կազմել է 11.84%:



Ընդհանուր ակտիվներում եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը կազմել է 78.6%:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ | ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

AraratBank

31.12.2021



31.12.2020



- Հաճախորդներին տրված վարկեր
- Ներդրումային արժեթղթեր
- Դրամական միջոցներ
- Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ
- Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ
- Այլ ակտիվներ
- Գուդվիլ

ԵԿԱՄՏԱԲԵՐ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 2021Թ. ԵՎ 2020Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ

AraratBank

(մլն ՀՀ դրամ)

	2021	2020	Փոփոխություն	%
Ակտիվներ, այդ թվում՝	**268,065**	**248,881**	**19,184**	**7.71%**
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում՝	**210,595**	**204,130**	**6,465**	**3.17%**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	*147,787*	*148,222*	*-435*	*-0.3%*
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	*15,976*	*14,341*	*1,635*	*11.4%*
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	*26,998*	*21,858*	*5,140*	*23.5%*
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	*5,974*	*5,848*	*126*	*2.2%*
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	*7,043*	*8,668*	*-1,625*	*-18.7%*
Ամորտիզացված արժեքով չափվող հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	*6,817*	*5,193*	*1,624*	*31.3%*
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը	*78.56%*	*82.02%*		

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ | ԵԿԱՄՏԱԲԵՐ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



Հաճախորդներին տրված վարկեր

Ներդրումային արժեթղթեր

Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ



Չնայած այն հանգամանքին, որ Պահանջները ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ և Ներդրումային արժեթղթերը աճել են, իսկ Հաճախորդներին տրված վարկերը 2020 թ.-ի համեմատ թերակատարվել են ընդամենը 0.3 տոկոսով, նախորդ տարվա համեմատ եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը նվազել է՝ կազմելով 78.6%՝ նախորդ տարվա 82.0%-ի դիմաց:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ | ՎԱՐԿԵՐ

Դեռևս 2020թ.-ի ընթացքում ի հայտ եկած խնդիրների մի մասը տեղափոխվեց 2021թ., ինչը, իհարկե, հանգեցրեց պորտֆելի նվազման: Այնուամենայնիվ, Բանկին մեծամասամբ հաջողվեց ապահովել կայուն վարկային պորտֆել: 2021թ.-ին իրականացված գործընթացները ներկայացված են ստորև.

- Բանկի և FMO հոլնադական զարգացման բանկի միջև կնքված «NASIRA» ծրագրի շրջանակներում Բանկը 2021թ.-ի 3-րդ եռամսյակում մեկնարկել է «EasyGoing» նոր վարկատեսակը, որը Բանկին հնարավորություն է տալիս լինել առավել ճկուն և վարկային միջոցներ առաջարկել նաև բավարար անշարժ գույքի գրավ չունեցող տնտեսվարողներին,
- Վերանայվել են վարկավորման գործընթացը կարգավորող մի շարք ներքին իրավական ակտեր: Արդյունքում, հաճախորդի կողմից վարկավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացումը, պահպանումը և Բանկի տարբեր ստորաբաժանումներին տրամադրումը իրականացվում է էլեկտրոնային եղանակով, ինչը հնարավորություն է ստեղծել վարկավորման ամբողջ գործընթացը դարձնել առավել ճկուն, արագ և արդյունավետ:
- ՀՀ ԿԲ-ի հետ կնքվել են մի շարք վարկային պայմանագրեր, որոնցով ներգրավվել են մատչելի վարկային միջոցներ, ինչը ՀՀ մասնավոր փոքր և միջին ձեռներեցության աջակցման ծրագրի շրջանակներում հնարավորություն է տվել 2021թ.-ին գործարկել վարկային գործիքներ, մասնավորապես՝ ՓՄՁ-ներին ՀՀ դրամ արժույթով վարկավորումն իրականացվում է սկսած տարեկան 9.5% դրույքաչափով:
- Իրականացվել են էլեկտրոնային «Սքորինգ» համակարգի բարելավմանն ուղղված աշխատանքներ:
- Ներդրվել են առաջնային շուկայից անմիջապես կառուցապատողից բնակարանների ձեռքբերման նոր նախագծեր՝ համագործակցելով տարբեր կառուցապատողների հետ:
- 2021թ.-ի ընթացքում վերանայվել են աշխատավարձային նախագծերի շրջանակներում առանց գրավի սպառողական օվերդրաֆտների տրամադրման պայմանները: Մասնավորապես բարձրացվել են տոկոսադրույքները՝ նշված պրոդուկտները եկամտաբեր դարձնելու նպատակով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ | ՎԱՐԿԵՐ

Ի լրումն վերոշարադրյալի՝ 2021թ.-ի տարեվերջի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի մնացորդը կազմել է 147,787 մլն ՀՀ դրամ: 2020թ.-ի համեմատ ցուցանիշի նվազումը կազմել է 0.3% կամ 435 մլն ՀՀ դրամ, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 14.4%:
2021թ.-ին Բանկի ընդհանուր վարկային պորտֆելը կազմել է ընդհանուր ակտիվների 55.1%-ը, նախորդ տարվա 59.6%-ի դիմաց, ինչը պայմանավորված է հիմնականում Բանկերի և այլ ֆինանասական կազմակերպությունների միջոցների և Ներդրումային արժեթղթերի նկատմամբ առավել մեծ առանջանցիկ աճի տեմպով:

Հաճախորդներին տրված վարկեր, մլն ՀՀ դրամ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ՎԱՐԿԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Բանկի կողմից տրամադրված վարկերում հիփոթեքային վարկերի ծավալը՝ 2021թ.-ի տարեվերջի դրությամբ կազմել է 22,856 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 21,239 մլն ՀՀ դրամի դիմաց, աճը՝ 1.1%: Բանկի կողմից տրամադրված սպառողական վարկերը 2020թ.-ի համեմատ աճել են մոտ 2,356 մլն ՀՀ դրամով կամ 1.7%-ով և 2021թ.-ի վերջի դրությամբ կազմել են 44,030 մլն ՀՀ դրամ: 2021 թվականին 2020թ.-ի համեմատ չնչին աճել են գյուղատնտեսության և շինարարության ոլորտներին տրամադրված վարկերը, սակայն նվազել են արդյունաբերության ճյուղին տրամադրված վարկերը՝ համապատասխանաբար 0.03%, 0.4%, -0.9%-ով: Առևտրի վարկավորման ծավալները հաշվետու տարվա ավարտին կազմել են 26.3 մլն դրամ՝ նվազելով 1.4%-ով:

Տրամադրված վարկերի եւ փոխատվությունների վերլուծությունն ըստ տնտեսության ոլորտների 31.12.2021



Տրամադրված վարկերի եւ փոխատվությունների վերլուծությունն ըստ տնտեսության ոլորտների 31.12.2020



- Սպառողական վարկեր
- Այլ
- Առևտուր
- Հիփոթեքային վարկեր
- Շինարարություն
- Արդյունաբերություն
- Գյուղատնտեսություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ՎԱՐԿԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2021թ.-ի վերջի դրությամբ ընդհանուր վարկային պորտֆելում ավելացել է ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի տեսակարար կշիռն, ինչը դիտարկվում էր որպես Բանկի ռազմավարական առաջնահերթություններից մեկը: Տարեվերջին ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի տեսակարար կշիռը կազմել է 45.3%՝ նախորդ տարվա 54.7%-ի դիմաց:

Տրամադրված վարկերի եւ փոխատվությունների վերլուծությունն ըստ հաճախորդների 31.12.2021



Տրամադրված վարկերի եւ փոխատվությունների վերլուծությունն ըստ հաճախորդների 31.12.2020



ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ

2021թ.-ի ընթացքում ԱրարատԲանկն իր ներդրումային քաղաքականության շրջանակներում շարունակեց իրականացնել ակտիվ գործունեություն արժեթղթերի շուկայում՝ ապահովելով համապատասխան ցուցանիշների շարունակական աճ:
2021թ.-ի վերջի դրությամբ արժեթղթերում Բանկի ներդրումային արժեթղթերի պարտֆելը կազմել է 46,833 մլն ՀՀ դրամ, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 17.7%:



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ

Ներդրումային պորտֆելում ՀՀ պետական պարտատոմսերը կազմել են 62.1%՝ 2020թ.-ի 61.9%-ի դիմաց, Ոչ պետական պարտատոմսերը կազմել են 37.6%՝ նախորդ տարվա 37.9%-ի դիմաց, իսկ կորպորատիվ բաժնետոմսերը 2021թ.-ի տարեվերջին կազմել են 0.2%:





ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2021թ.-ի ավարտին Բանկի պարտավորությունները կազմել են 230,286 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 9.3%-ով կամ 19.6 մլն ՀՀ դրամով:



Նախորդ տարվա համեմատ պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է բանկերի նկատմամբ պարտավորությունների, ժամկետային ավանդների և ցպահանջ միջոցների ավելացմամբ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄՆԵՐ

AraratBank

Տարեվերջին Բանկի կողմից Միջազգային ֆինանսական կազմակերպություններից և ոչ ռեզիդենտ բանկերից ներգրավված փոխառությունները կազմել են 58,156 մլն ՀՀ դրամ կամ պարտավորությունների 25.3%-ը, իսկ 2020թ.-ի համեմատ այն նվազել է 14.0%-ով: Վերոնշյալը համահունչ է Բանկի կողմից որդեգրած՝ միջոցների կառավարման արդյունավետության բարձրացման ռազմավարությանը, որի շրջանակներում, չնայած հաշվետու տարում միջազգային ներգրավումներ իրականացնելու ընթացքում առաջացած խոչընդոտների և խստացված պահանջների, Բանկն ակտիվորեն շարունակել է համագործակցությունը մի շարք միջազգային կազմակերպությունների հետ՝ Նիդերլանդների զարգացման ֆինանսական ընկերություն (FMO), DEUTSCHE INVESTITIONS UND ENTWICKLUNGSGESELLSCHAFT MBH ներդրումային կազմակերպություն (DEG), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD), Համաշխարհային բանկ (WB), Հարավարևելյան Եվրոպայի եվրոպական հիմնադրամ (EFSE), Incofin Investment Management, ResponsAbility Global Microfinance Fund, Blue Orchard, Եվրասիական զարգացման բանկ (EDB), SYMBIOTICS SICAV ընկերություն և այլ ֆինանսական կազմակերպություններ:

Միջազգային ներգրավումներ, մլն ՀՀ դրամ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ





ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ

Ժամկետային ավանդները հաշվետու տարվա ավարտին կազմել են 71,420 մլն ՀՀ դրամ կամ Ընդհանուր պարտավորությունների շուրջ 31.0%-ը և 2020թ.-ի համեմատ ավելացել են 46.0%-ով, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 13.4%: Մեկ տարվա ընթացքում իրավաբանական անձանց ժամկետային ավանդների տեսակարար կշիռը աճել է՝ կազմելով 76.3%, իսկ ֆիզիկական անձանց ավանդներինը կազմել են 41.0%:



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ





2021թ.-ի ընթացքում Բանկի կողմից չեն իրականացվել արժեթղթերի նոր թողարկումներ, իսկ պորտֆելը ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկման արդյունքում կազմել է 12,998 մլն ՀՀ դրամ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ | ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎՆԵՐ ԵՒ ՑՊԱՀԱՆՋ ՄԻՋՈՑՆԵՐ

Բանկի ընթացիկ հաշիվներն ու ցպահանջ միջոցները հաշվետու տարվա ավարտին կազմել են 53,347 մլն ՀՀ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների շուրջ 23.2%-ը: 2020թ.-ի համեմատ ցուցանիշը ավելացել է 8.8%-ով, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 4.4%: Իրավաբանական անձանց միջոցների տեսակարար կշիռը կազմել է 59.8%, իսկ ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշիռը՝ 40.2%:

Ընթացիկ հաշիվներ եւ ցպահանջ միջոցներ, մլն ՀՀ դրամ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ

2021թ.-ի վերջի դրությամբ Բանկի սեփական կապիտալը կազմել է 37,779 մլն ՀՀ դրամ, որը նախորդ տարվա վերջի համեմատ նվազել է 448 մլն ՀՀ դրամով կամ 1.2%-ով: Հաշվետու տարում բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում չի իրականացվել: Ուստի Ընդհանուր կապիտալի ցուցանիշի փոփոխությունը պայմանավորված է 2021թ.-ի տարեկան գործունեության արդյունքում գեներացված 45.7 մլն ՀՀ դրամ Զուտ շահույթով:

Ընդհանուր կապիտալ, մլն ՀՀ դրամ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ

2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմել է 8,803,655 հազար ՀՀ դրամ: Համաձայն Բանկի Կանոնադրության՝ բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 1,760,731 հատ սովորական անվանական բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 5,000 դրամ անվանական արժեքով:

2021թ.-ի Ընդհանուր կապիտալի փոփոխության արդյունքում մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը կազմել է 21,456 ՀՀ դրամ՝ 2020թ.-ի 21,711 ՀՀ դրամ ցուցանիշի համեմատ նվազելով 1.2%-ով:

Բանկի բաժնետոմսերի հաշվեկշռային արժեքի դինամիկան, ՀՀ դրամ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Տոկոսային և նմանատիպ եկամուտները հաշվետու տարվա գործունեության արդյունքում կազմել են 19,008 մլն ՀՀ դրամ՝ ավելանալով 8.3%-ով կամ 1,454 մլն ՀՀ դրամով:
Տոկոսային և նմանատիպ եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է Հաճախորդներին տրված վարկերի գծով ստացված տոկոսային եկամուտների 1,028 մլն ՀՀ դրամ կամ 7.3% աճով, որը կազմել է ընդհանուր տոկոսային եկամուտների 79.3%-ը՝ նախորդ տարվա 80.0%-ի դիմաց:
Տոկոսային և նմանատիպ եկամուտների կառուցվածքում Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներից ստացված տոկոսային եկամուտների մասնաբաժինը կազմել է 0.8% նախորդ տարվա 0.7%-ի փոխարեն՝ արդյունքում գեներացնելով 161 մլն ՀՀ դրամի տոկոսային եկամուտ:
Ներդրումային արժեթղթերից ստացված տոկոսային եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են 4.6%-ով և կազմել 3,257 մլն ՀՀ դրամ:
Տոկոսային և նմանատիպ եկամուտների կառուցվածքը բերված է ստորև.

31.12.2021



31.12.2020



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Տոկոսային և նմանատիպ ծախսերը հաշվետու տարվա գործունեության արդյունքում կազմել են 10,648 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 16.21%-ով կամ 1,485 մլն ՀՀ դրամով:

Տոկոսային ծախսերում 2020թ.-ի համեմատ նվազել են Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների գծով ծախսերի տեսակարար կշիռը՝ 51.5%-ի դիմաց կազմելով 40.3%: Արդյունքում ծախսերը կրճատվել են 9.1%-ով կամ 428 մլն ՀՀ դրամով, որը հիմնականում հաշվեկշռային պորտֆելի նվազման արդյունքն է:

Բանկի հաճախորդների ցպահանջ և ժամկետային ավանդների դիմաց կատարված ծախսերը 2021թ.-ին կազմել են 4,051 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա տարեկան ցուցանիշի համեմատ աճելով 31.5%-ով, իսկ տեսակարար կշիռը Տոկոսային ծախսերում կազմել է 38.0%, ինչը միանշանակ օրինաչափ է պորտֆելների աճին զուգահեռ:

Բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց կատարված տոկոսային ծախսերը կազմել են 790 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա ցուցանիշից պակաս լինելով 2.2%-ով: Վերջինս հաշվետու տարում ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի արժեզրկման արդյունքն է:

2021 թ.-ին Բանկի կողմից ստացված զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտները կազմել են մոտ 8,360 մլն ՀՀ դրամ՝ 2020թ. համեմատ նվազելով 31 մլն ՀՀ դրամով կամ 0.4%-ով:

Բանկի զուտ տոկոսային մարժան 2020թ.-ի համեմատ նվազել է 0.28 տոկոսային կետով և կազմել է 4.03%:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Տոկոսային ծախսերի կառուցվածքը 31.12.2021



- Հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց
- Բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց
- Բանկերից և այլ ֆին. կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց
- Ռեպո պայմանագրերի դիմաց
- Ստորադաս փոխառության դիմաց
- Այլ

Տոկոսային ծախսերի կառուցվածքը 31.12.2020



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Հաշվետու տարվա ընթացքում Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտները կազմել են մոտ 2,214 մլն ՀՀ դրամ՝ 2020թ.-ի համեմատ աճելով 23.9%-ով կամ մոտ 427.6 մլն ՀՀ դրամով:

Հաշվետու տարվա ընթացքում Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսերը կազմել են 1,091 մլն ՀՀ դրամ՝ 2020թ.-ի համեմատ աճելով 37.1%-ով կամ 295.2 մլն ՀՀ դրամով:

2021 թ.-ին Բանկի կողմից ստացված Զուտ կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտները կազմել են 1,123 մլն ՀՀ դրամ՝ ավել լինելով 2020թ.-ի համապատասխան ցուցանիշից 132.4 մլն ՀՀ դրամով կամ 13.4%-ով: 2020թ.-ի համեմատ աճել են հիմնականում վճարահաշվարկային և վճարային քարտերով գործառնություններից միջնորդավճարները:

2021թ.-ի ընթացքում Բանկն արտարժութային գործառնություններից գեներացրել է 1,560 մլն ՀՀ դրամի զուտ եկամուտ:

Բանկի ընդհանուր վարչական ծախսերը կազմել են 7,127 մլն ՀՀ դրամ 2020թ.-ի 7,048 մլն ՀՀ դրամի դիմաց: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշի 1.1% տարբերությունը պայմանավորված է հիմնական միջոցների ամորտիզացիայի աճով, որը 2020թ.-ին Բանկում մեկնարկած վերաբրենդավորման գործընթացում իրականացված նոր կապիտալ ներդրումների արդյունքն է:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Չնայած հաշվետու տարում առկա մի շարք խնդիրներին՝ Բանկը կարողացավ տարին ամփոփել Զուտ շահույթի 45.7 մլն ՀՀ դրամ ցուցանիշով:

Բանկի շահույթ, մլն ՀՀ դրամ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ | ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ստորև բերված են Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները:



Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել է 825.9 ՀՀ դրամ:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2021թ.-ին ևս Բանկը, որպես ներդրումային ծառայությունների մատուցման շուկայի առաջատարներից մեկը, շարունակեց ուշադրության կենտրոնում պահել Ներդրումային ծառայությունների մատուցման ոլորտը և մեխանիզմներ կիրառեց մատուցվող ծառայությունների (պահառություն, բրոքերիջ, տեղաբաշխում, արժեթղթերով գործարքների հետ կապված վերլուծությունների կազմում, հրապարակում) որակի բարելավման նպատակով: Ստորև բերված են այս ուղղությամբ իրականացված միջոցառումները.

Միջազգային շուկայում ավելի քան 5000 ֆինանսական գործիքով (5000 բաժնետոմս և ETF, 60 արժութային զույգ, 40 ինդեքս, 20 ապրանքահումքային ակտիվ), միաժամանակ ցածր ծախսատարությամբ ARARATBANK Trading Platform (այսուհետ՝ ATP) առևտրային հարթակի գործարկում, ինչը հնարավոր է դարձել հետևյալ միջոցառումների ձեռնարկման արդյունքում.

- Միջազգային գործընկերների հետ ATP առևտրային հարթակի տեխնիկական ապահովման, ինչպես նաև իրական ժամանակում շուկայական գների ապահովման պայմանագրերի կնքմանն ուղղված աշխատանքների կազմակերպում:
- Բանկի կայքում ATP առևտրային հարթակի ժամանակավոր էջի, միաժամանակ նաև հիմնական մրցունակ կայքի (landing page) ստեղծման, ինչպես նաև հեռախոսային հավելվածների (IOS, Android) վերաբրենդավորման աշխատանքների ձեռնարկում: Բանկի աշխատակիցների համար ATP առևտրային հարթակի հաճախորդների հետ աշխատելու գործելակերպի/կանոնների (SCRIPT) մշակում:
- Բանկում ռեեստրավարման և պահառուական (ԲՌՊ) ծառայությունների միջնորդավորման գծով հաճախորդներին մատուցվող ծառայությունների արդյունավետության բարձրացում:
- Տեղական և միջազգային շուկաներում բրոքերային ծառայությունների մատուցման սակագների և պայմանների վերանայում: Միջազգային շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակում տրվել են ոչ բավարար ծածկույթով (լևերիջով) գործարքների կնքման հնարավորություններ, սահմանվել են լևերիջի մրցունակ շեմեր, բրոքերային ծառայություններին կից հաճախորդներին մատուցվող հարակից ծառայություններ՝ ըստ առանձնացված պրոֆեսիոնալ (Ստանդարտ և VIP) և ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների:
- ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԹՐԵՅԴԻՆԳ՝ Հայաստանում առաջին ներդրումային տելեգրամյան ալիքի գործարկում: Այն 24/7 ռեժիմով գործող հարթակ է, որը միջազգային և տեղական ֆինանսական շուկաների մասին ամենաթարմ նորություններն ու վերլուծությունները հասանելի է դարձնում պոտենցիալ ներդրողների համար՝ հնարավորություն տալով կայացնել արդյունավետ ներդրումային որոշումներ, հարցեր ուղղել բրոքերներին և քննարկումներ ծավալել շահագրգիռ անձանց հետ:

ԹՎԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

AraratBank

- 2021թ.-ին Բանկի ռազմավարական առաջնահերթություն համարվող թվային բանկային համակարգը ապահովեց իր շարունակական զարգացումը: Այստեղ ուշադրության կենտրոնում էր մասնավորապես AraratMobile բջջային հավելվածի կատարելագործումը: Այս ուղղությամբ իրականացված միջոցառումներն ու ձեռք բերված հաջողությունները ներկայացված են ստորև:
- 2021թ.-ին ներդվել է նոր թվային բանկ համակարգը, որը նոր տեխնոլոգիաներով արդիականացված, հաճախորդներին մատուցվող ծառայությունների առավել ընդլայնված, ֆունկցիոնալությամբ և արագությամբ առավել արդիական ծառայությունների մատուցմամբ համակարգ է:
- 2021թ.-ի 1-ին եռամսյակում իրականացվել են նոր համակարգի մշակման, նախագծման ու ստեղծման գործընթացները: Երկրորդ եռամսյակում օգտագործողներին տրամադրվել է հավելվածի բետտա տարբերակը, իսկ 3-րդ և 4-րդ եռամսյակներում շտկվել են թերացումներն ու ավելացվել ֆունկցիոնալները:
- Ներդրվել է ֆիզիկական անձանց միջև փոխանցումների նոր, արագ և անվտանգ ծառայություն՝ FLIGHT ծառայությունը, որը եզակի է P2P փոխանցումներում:

Բանկի կողմից թվային բանկինգի ոլորտում նշանակալից ձեռքբերումները ներկայացված են ստորև.

- Նոր, արդիական, տեխնիկապես ամբողջովին թարմացված Մոբայլ Բանկ համակարգի գործարկում սեղմ ժամկետներում:
- Համակարգի վերաբրենդավորում, ավելի քան 50 ծառայությունների և հնարավորությունների տրամադրում հաճախորդներին:
- Թվային բանկ համակարգի շարունակական թեստավորում և առկա թերությունների վերացում:
- Հաճախորդների գործող բազայի միգրացիա նոր համակարգին և շարունակական աշխատանքներ այդ ուղությամբ, նոր հաճախորդների ներգրավում:
- Գործընկերության հաստատում Օքսիջեն ընկերության հետ:
- Բանկային ավտոմատացված մեքենաների (VTM)-ի ծրագրի մեկնարկում:
- GOOGLE PAY (ISSUER’S WALLET) և APPLE PAY անհպում վճարման համակարգերի ներդրման գործընթացի մեկնարկ:

ՄԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԸ

Հաճախորդների գոհունակությունը Բանկի առաջնային նպատակներից է՝ հիմնված մարդակենտրոն սպասարկման, բանկային պրոդուկտների բազմազանության, մրցունակ սակագների, գործընկերության և պատասխանատվության վրա: Այս համատեքստում Բանկը սպասարկող անձնակազմին դիտարկում է որպես բանկ-հաճախորդ համակարգի կարևորագույն ներկայացուցիչ, ինչպես նաև բանկային ծառայությունների վաճառք իրականացնող առաջնային օղակ: Ուստի, սպասարկող անձնակազմի մասնագիտական պատրաստվածությունն ու հաճախորդների հետ հաղորդակցվելու և վաճառքը արագ ու գրագետ իրականացնելու հմտությունները մշտապես գտնվում են ուշադրության կենտրոնում:

Դեռևս 2020թ.-ին մեկնարկած վերաբրենդավորման գործընթացին զուգահեռ 2021թ.-ին Բանկը փորձել է նաև նորովի ձևակերպել Բանկի հիմնարար արժեքները, որոնք կհանդիսանան հիմնասյուներ նոր կորպորատիվ մշակույթի ձևավորման համար և կնպաստեն հաճախորդների նկատմամբ մոտեցումների փոփոխությանը՝ հաճախորդակենտրոն սկզբունքների ձևավորմանը և նրանց բավարարվածության ու լոյալության մակարդակի պահպանմանն ու բարձրացմանը:

Կարևորելով սպասարկող անձնակազմի պրոֆեսիոնալիզմը, հաճախորդների սպասարկման որակի բարձրացումը և համալիր ծառայությունների մատուցումը՝ Բանկը շարունակաբար իրականացնում է համապատասխան քայլեր հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման (CRM) համակարգի զարգացման ուղղությամբ: Այս հանգամանքը կարևորվում է նաև՝ ելնելով ռազմավարության հիմքում դրված ինտենսիվ աճի և խաչաձև վաճառքներ իրականացնելու սկզբունքից:

Մարտահրավերներով ու խնդիրներով լի հաշվետու տարին հաճախորդների հավատարմության մակարդակի պահպանման լավագույն ցուցիչն է: Զգուշավոր և գրագետ քաղաքականության արդյունքում Բանկին հաջողվել է պահպանել ֆիզիկական անձանց թիվը՝ միաժամանակ 4,4% աճ գրանցելով իրավաբանական անձ հաճախորդների շրջանում և 37%՝ ավանդատու հաճախորդների շրջանում: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա ընթացքում օնլայն տիրույթում անկանխիկ գործարքների քանակի ավելացումը փաստում է նաև AraratMobile բջջային հավելվածի արդյունավետության մասին:

Սուր մրցակցային և ռազմական-համաճարակային պայմաններում 2021թ.-ին Բանկը պահպանել է իր հաճախորդների կայուն բազան և 2020թ.-ի համեմատ ավելացրել նաև իրավաբանական անձանց տեսակարար կշիռը:

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

Ներքին հսկողական համակարգը Բանկի զարգացման ռազմավարական նպատակների իրագործման և կառավարման հիմնական տարրերից է: Ներքին հսկողական համակարգն ուղղված է ապահովելու և զարգացնելու Բանկի գործունեության արդյունավետությունը, աջակցելու Բանկին հասնել իր նպատակներին՝ ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու շարունակական բարելավման միջոցով:

Բանկում ներդրվել և շարունակաբար կատարելագործվում է միջազգային լավագույն փորձին համապատասխան ներքին հսկողության համակարգ, այդ թվում՝ ռիսկերի գնահատման վրա հիմնված Բանկի ներքին աուդիտի աշխատանքների պլանավորման, ստուգումների իրականացման և հետստուգումային հսկողության (Follow up) գործառույթ:

Ներքին աուդիտի գործառույթը, որը ներդրվել է ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներին ու վարվելակերպի կանոններին համապատասխան, ապահովում է անկախ և անկողմնակալ հավաստման (assurance) գործունեության իրականացում՝ ուղղված Բանկի կառավարման, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ու գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Այդ նպատակով Ներքին աուդիտի կողմից աշխատանքային ծրագրերի կազմման գործընթացում հիմնականում ստուգումների շեշտը դրվում է Բանկի կողմից իրականացվող գործարար գործընթացների, ինչպես նաև տարածքային ստորաբաժանումների գործունեության արդյունավետության գնահատման և ռիսկերի բացահայտման վրա:

Ստուգումների և գնահատումների արդյունքները նպաստել են բացահայտված խնդիրների վերացման նպատակով Ներքին աուդիտի առաջարկությունների և եզրակացությունների հիման վրա ուղղիչ և կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը՝ ուղղված Բանկի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ու գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

AraratBank

Ներքին հսկողության համակարգի արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև համապատասխանության ապահովման գործընթացն ապահովելու նպատակով ԱրարատԲանկի կառուցվածքով սահմանված Համապատասխանության ապահովման խումբը համալրվել է ևս մեկ աշխատակցով: Համապատասխանության ապահովման խումբն օժանդակում է գործարար գործընթացների իրականացումն օրենսդրության, նորմատիվ և ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան, ինչպես նաև նպաստում է համապատասխանության և կորպորատիվ մշակույթի պահպանմանը:

Իրականացվել են մի շարք ներքին իրավական ակտերի քարտեզագրում և գնահատում, որն ուղղված է գործառույթների բարձր ռիսկի իջեցմանը և դրանց ավտոմատացմանը: Իրականացվում է հսկողական համագործակցություն ներքին աուդիտի, ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման միջև՝ համաձայն ՀՀ ԿԲ իրավական ակտերի, որոնք ուղղված են բարձրացնելու ընթացիկ գործունեության նկատմամբ հսկողությունը:

Ներքին իրավական ակտերը ուսումնասիրվում են ըստ առանձին գործառնությունների ՀՀ օրենքների և ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերի համապատասխանության տեսանկյունից, ինչպես նաև տրվում են օպտիմալացման առաջարկություններ:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

Վերջին ժամանակներում Բանկը առերեսվել է թե՛ արտաքին միջավայրից եկող, թե՛ ՀՀ տնտեսությունում և բանկային համակարգում առկա բազում մարտահրավերներին: Բանկին հաջողվեց դիմակայել համաճարակի և պատերազմի հետևանքով առաջացած բոլոր ռիսկերին: Չնայած նրան, որ ռիսկերը ակնհայտորեն մեծ էին գործունեության գրեթե բոլոր ուղղություններում, Բանկը ապացուցեց, որ ունակ է դիմակայելու ծանր սթրեսային իրավիճակներին բնորոշ ռիսկերին:

Բարձր իրացվելիության պահպանման նպատակով Բանկը կշարունակի օգտագործել իր հնարավորությունները միջազգային ֆինանսական կազմակերպություններից երկարաժամկետ ու ցածր ծախսատարություն ունեցող միջոցների ներգրավման ուղղությամբ: Միաժամանակ արտաքին աղբյուրներից ներգրավվող միջոցների հնարավոր թանկացման կամ ներգրավման դժվարացման դեպքում իրացվելիության ռիսկի զսպման նպատակով Բանկը պլանավորում է հավասարակշռել ներգրավված միջոցների պորտֆելը տեղական շուկայից ներգրավվող ժամկետային միջոցների կշռի բարձրացմամբ՝ ապահովելով պորտֆելի դիվերսիֆիկացիան:

Վարկային ռիսկի արդյունավետ կառավարման նպատակով, հաշվի առնելով տնտեսական բացասական զարգացումները և վարկային պորտֆելի որակի վատթարացման հետ կապված սպասումները, Բանկը կշարունակի վարել զգուշավոր վարկային քաղաքականություն՝ միաժամանակ ուշադրության կենտրոնում պահելով գործող վարկային պորտֆելում առկա զգայուն վարկերը և ակտիվ միջոցներ ձեռնարկելով խոցելի ոլորտներին տրամադրված վարկերի վերադարձման ուղղությամբ:

Գործառնական ռիսկերի կառավարման գործընթացի շրջանակներում, հաշվի առնելով աշխատանքի կազմակերպման նոր իրողություններն ու պահանջները, Բանկը կշարունակի աշխատանքի հեռավար կազմակերպման գործընթացի արդյունավետության ու անվտանգության բարձրացման ուղղությամբ իր աշխատանքները: Միաժամանակ, ստեղծված իրավիճակը կարևորում է նաև հաճախորդների հեռավար սպասարկումը և օրակարգային դարձնում Բանկի ծառայությունների թվայնացումն՝ ուշադրության կենտրոնում պահելով գործարքների անվտանգ իրականացումն ու հնարավոր ռիսկերը:

Շուկայական ռիսկերի գծով ցածր ռիսկայնությունը պահպանելու նպատակով՝ Բանկը վարել է արտարժութային դիրքի այնպիսի քաղաքականություն, որն ապահովել է Բանկի եկամուտների և ռիսկերի հավասարակշռված ու օպտիմալ մակարդակ: Բանկը շարունակել է գործել՝ համաձայն ներգրավված ու տեղաբաշխված միջոցների բալանսավորված կառուցվածքի քաղաքականության՝ ըստ ժամկետների և տոկոսադրույքների:

Բանկի գործող ռիսկի ախորժակով սահմանված է Ռիսկերի կառավարման եռաստիճան համակարգ, որով յուրաքանչյուր սահմանաչափի շեղման դեպքում սահմանված են պատասխանատուների շրջանակը և իրականացվող միջոցառումները: Նման բուֆերների սահմանման արդյունքում հնարավորություն է ստեղծված ռիսկերը արձանագրել և կառավարել տարբեր մակարդակներում՝ շահագրգիռ ստորաբաժանումներից ընդհուպ մինչև Բանկի Խորհուրդ:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

Բանկի ռիսկի ախորժակով և ռիսկի ախորժակի ներքո սահմանված գործիքներով ձևավորված է Ռիսկերի կառավարման ընդհանուր և ըստ առանձին ռիսկերի միասնական կառավարման համակարգ:

Բանկի ռիսկի ախորժակով առաջին մակարդակի ցուցանիշներով սահմանված է Բանկի նպատակային ռիսկի պրոֆիլը, որն իրենից ներկայացնում է ներքին սահմանաչափերի համակարգ, որն էլ իր հերթին հնարավորություն է ընձեռում սկզբնական փուլում հսկողություն իրականացնել Բանկի ռիսկի ախորժակի պահպանման նկատմամբ՝ միաժամանակ չխոչընդոտելով Բանկի գործունեության բնականոն ընթացքին և ակտիվների արդյունավետ կառավարմանը:

Բանկի գործող ռիսկի ախորժակն իր մեջ ներառում է հետևյալ հիմնական ուղենիշները՝

- Բանկի կողմից ընդունված ռիսկի մեծությունը չպետք է հասնի այնպիսի մակարդակի, որ հանգեցնի Բանկի գործունեության դադարեցմանը՝ այդ թվում, շոկային իրավիճակներում:
- Անկանխատեսելի կորուստների դեպքում Բանկի կապիտալի մեծությունը պետք է բավարարի Բանկի վարկատու գործընկերների պահանջները:
- Բանկի կողմից իրականացվող գործառնությունների դեպքում դրամական հոսքերի կառուցվածքը և իրացվելիության բուֆերները պետք է երաշխավորեն հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ժամանակին կատարումը՝ երկարաժամկետ և կարճաժամկետ հատվածներում: Այդ նպատակով Բանկը սահմանել է իրացվելիության գծով մի շարք ցուցանիշներ, որոնք պարբերաբար վերահսկվում են օրական, ամսական և եռամսյակային կտրվածքով:
- Բանկի ակտիվների և պարտավորությունների գործող կառուցվածքը ապահովում է Բանկի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և համապատասխանում է Բանկի բիզնես մոդելին:
- Իր գործունեության ընթացքում Բանկը ձգտում է խուսափել կենտրոնացումներից՝ սահմանելով կենտրոնացումների թույլատրելի սահմանաչափեր:
- Բանկը վարկային պորտֆելի կառավարման նպատակով սահմանել է վարկային պորտֆելի ռիսկի զսպման մի շարք ցուցանիշներ՝ հաշվի առնելով Բանկի վարկային ռիսկի պրոֆիլը, ռազմավարությունը և շուկայում ակնկալվող փոփոխությունները:
- Բանկն ապահովում է կայուն զարգացում և արդյունավետ գործունեություն երկարաժամկետ հորիզոնում:
- Բանկը պատշաճ կերպով ապահովում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված պահանջները:
- Իր գործունեության ընթացքում պահպանում է բարի համբավ՝ խուսափելով այնպիսի գործողություններից, որոնք կվնասեն իր գործարար համբավին:

Ռիսկերի կառավարման գործընթացներն իրականացվում են Բանկի Խորհրդի կողմից հաստատված ռիսկի ախորժակի քաղաքականությանը համաձայն և գտնվում են Բանկի ուշադրության կենտրոնում: Բանկում մշտապես ուսումնասիրվում և կիրառվում է միջազգային փորձը՝ բարձրացնելով ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունը՝ նպատակ ունենալով ապահովել ռիսկ-եկամուտ օպտիմալ մակարդակը և նվազագույնի հասցնել բոլոր ռիսկերը:

AraratBank

AraratBank
Available on the App Store
GET IT ON Google Play
(+374)10 59 23 23
Buzand St., bldg. 87, prem. 85, 0002 Yerevan, Armenia
info@araratbank.am | araratbank.am